ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան **26.07.2019թ.**

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սաֆարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյան (ԳԱ), Ե. Մատասյան (ԲԱ)
Լ. Գևորգյան (ԳԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. Հրատապ բաց մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու մասին

(Ա. Սաֆարյան)

1.1 **Հիմք ընդունելով պատասխանատու** ստորաբաժանման 25.07.2019 թվականի հ. 16/14389 գրությունը, համաձայն որի «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, որոշեց հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Գնման առարկայի փոփոխված տեխնիկական բնութագիրը.

1. Նախատեսել Երևանում գտնվող շուրջ 96 մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի տեղադրում:
2. Ծառայությունն իր մեջ ներառում է սարքավորումները և դրանց տեղադրումը, միացումն ու գործարկումը:

Սարքավորումների ցանկն է

• Անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային համակարգի ընդունող-ղեկավարող սարք 96 հատ: Սարքը պետք է նախատեսված լինի անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային համակարգերում օգտագործման համար, պետք է ունենա հրդեհային անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգի համապատասխանության վկայագիր: Սարքին միացվող կապի, հասցեային գծերի քանակը նվազագույնը 2 հատ, RS-485 ինտերֆեյսի առկայություն, որի ինտերֆեյսով աջակցվող կապի գծի երկարությունը նվազագույնը 1000 մետր, ՅՈՒԷՍԲԻ (USB) ինտերֆեյս: Սարքին միացվող հասցեային սարքավորումների քանակը նվազագույնը 500 հատ: Սեկ հասցեային կապի գծին(ՀԿԳ) միացվող հասցեային սարքավորումների քանակը նվազագույնը 250 հատ: Սարքին պետք է ներկառուցված լինի ռելե «չոր կոնտակտ» տիպի նվազագույնը 2 հատ: Սարքը պետք է ունենա իրադարձությունների մատյան, որի մեջ գրանցվում է ինֆորմացիա իրադարձության տիպի, ամսաթվի, ժամի, հասցեական կապի գծի և սարքավորման հասցեի մասին: Բոլոր իրադարձությունները պետք է ամրագրվեն հոսանքից անկախ հիշողությունում: Սարքի դիմային հատվածում պետք է լինի էկրան և ստեղնաշար: Հրդեհային մատյանում պահպանվող իրադարձությունների քանակը նվազագույնը 10240 հատ: Անվտանգության մատյանում պահպանվող իրադարձությունների քանակը նվազագույնը 500 հատ: Հասցեական կապի գծի երկարությունը՝ առանց լրացուցիչ մոդուլների, պետք է լինի նվազագույնը 3000 մետր: Սարքի չափսերը ոչ պակաս քան 190x155x50 մմ և ոչ ավել քան 205x160x65 մմ, իսկ քաշը չգերազանցի 1 կգ-ը:

• Երկրորդային էլեկտրասնուցման աղբյուր, պահուստային 192 հատ – Երկրորդային էլեկտրասնուցման աղբյուրը պետք է լինի հասցեային սարքավորում՝ անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային սարքին համապատասխան, և պետք է ապահովի անխափան սնուցում: Այն պետք է ունենա հասցեական կապի գծի միջոցով անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային սարքին՝ մարտկոցի նախնական լիցքաթափման, ցանցային լարման բացակայության, կարճ միացման, նորմայից բարձր լարման, ծանրաբեռնվածության և խորը լիցքաթափման ազդանշաններ ուղարկելու հնարավորություն: Սնուցման աղբյուրը պետք է ապահովի ցանցային, մուտքային և մարտկոցի լարումների ընթացիկ արժեքները՝ հասցեական կապի գծի միջոցով անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային սարքին ուղարկելու հնարավորություն: Պետք է պահպանի աշխատունակություն առավելագույնը 130Վ մուտքային լարման պայմաններում: Նոմինալ հոսանքի ուժը առավելագույնը 3.5Ա: Սնուցման աղբյուրը պետք է ապահովի սարքավորումների անխափան սնուցում՝ նվազագույնը 12 Վ նոմինալ լարումով: Պետք է ունենա պահուստային ռեժիմում անընդհատ աշխատանքի շարունակականությունը մեծացնելու հնարավորություն: Այն պետք է ունենա մարտկոցի տեղադրման հնարավորություն, յուրաքանչյուրը նվազագույնը 17Ա/ժ ունակությամբ:

• Հրդեհային ծխային հասցեաանալոգային տվիչ 11520 հատ - Տվիչը պետք է ունենա ծխի ուղեկցությամբ հրդեհի հայտնաբերման հնարավորություն, օպտիկաէլեկտրոնային էլեմենտի միջոցով և լինի հասցեաանալոգային: Տվիչը պետք է լինի «Անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային համակարգի ընդունող-ղեկավարող սարք»-ին

համապատասխան: Սնուցումը և ինֆորմացիայի փոխանակումը սարքի հետ, պետք է իրականացվի երկլար ՀԿԳ-ով, և ունենա երկբևեռ միացման տեխնիկական հնարավորություն: Տվիչը պետք է.

- կարողանա չափել ծխի խտությունը
- կարողանա վերլուծի չափման արդյունքները և «հրդեհ» ազդանշանի ձևավորման վերաբերյալ որոշում ընդունել
- ունենա աշխատանքային ռեժիմի ցուցիչ:
- ավտոմատ կերպով փոխհատուցի փոշոտվածությունը
- ունենա մեխանիկական և օպտիկական թեստավորման միջոց
- ունենա անընդհատ օգտագործման հնարավորություն ոչ բարձր, քան -30°C և ոչ ցածր, քան+70 °C ջերմաստիճանում
- ունենա լուսային հոսքի նվազման զգայունություն՝ ոչ ավել, քան 0.20 Դբմ
- ունենա կոմբինացված հասցեի տրման հնարավորություն՝ բաղկացած ՀԿԳ-ի համարից և ինքնին տվիչի հասցեից:
- պահպանի աշխատունակությունը՝ նվազագույնը. 10 մ/վ արագությամբ օդային հոսքի ազդեցության ներքո:
- պահպանի աշխատունակությունը՝ ոչ պակաս, քան 12000 լկ ֆոնային լուսավորության ենթարկվելու պայմաններում:

• Անվտանգության ե հրդեհային ահազանգման հասցեային կոմբինացված լուսաձայնային ազդարար 800 հատ: Ազդարարը պետք է ձևավորի ահազանգման լուսային ե ձայնային ազդանշան:Ազդարարի ձայնային ճնշման աստիճանը (1 ±0,05)մ տարածության վրա, պետք է լինի նվազագույնը 85 Դբ: Ազդարարը պետք է ապահովի լուսային ազդարարման կոնտրաստային ընկալումը նրա լուսավորվածության արժեքների 1-ից 500 լկ դիապազոնի պայմաններում: Ազդարարը՝ սնուցումը և ղեկավարման ազդանշանները, պետք է ստանա հասցեային կապի գծերով «Անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային համակարգի ընդունող-ղեկավարող սարք»-ից: ՀԿԳ-ին երկբևեռ միացման տեխնիկական հնարավորություն: Ազդարարի կաղապարով ապահովվող պաշտպանվածության աստիճանը պետք է փնի նվազագույնը IP41:

• Հրդեհային ձեռքի հասցեային տվիչ 2000 հատ: Ձեռքի հասցեային տվիչը պետք է ունենա «Հրդեհ» ազդանշան ձևավորելու ե երկլար ՀԿԳ-ով «Անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային համակարգի ընդունող-ղեկավարող սարք»-ին ուղարկելու հնարավորություն: Պետք է ունենա տվիչի աշխատունակությունը հաստատող օպտիկական ցուցիչ: Տվիչի սնուցումը պետք է իրականացվի հասցեային կապի գծով: Կոճակի սեղմումից հետո՝ տվիչը պետք է մնա գործարկված վիճակում: Կոմպլեկտում պետք է լինի կոճակի՝ նախնական դիրք, ետ բերման բանալի: Հերթապահ ռեժիմում տվիչի ցուցիչը պետք է թարթի առավելագույնը 0.35 Հց: «Հրդեհ» ռեժիմում ցուցիչը պետք է թարթի նվազագույնը 2Հց հաճախականությամբ: Տվիչի չափսերը պետք է լինեն առավելագույնը 90x88x50 մմ:

• Շլեյֆի մեկուսիչ 300 հատ: Շլեյֆի մեկուսիչը կարճ միացման ախտանիշերի հայտնաբերման դեպքում, պետք է ապահովի ՀԿԳ-ի մի մասի մեկուսացման ֆունկցիան: Շլեյֆի մեկուսիչի սնուցումը և ազդանշանի փոխանցումը պետք էիրականացվի «Անվտանգության և հրդեհային ահազանգման հասցեային համակարգի ընդունող-ղեկավարող սարք»-ին միացված ՀԿԳ-ով: ՀԿԳ-ին երկբևեռ միացման հնարավորության առկայություն: Մեկուսիչի կաղապարով ապահովվող աաշտպանվածության աստիճանը պետք է լինի նվազագույնը IP2Q: •

• Ընդունող-ղեկավարող սարք, TM վերահսկիչով 96 հատ - GSM 2 ՍԻՄ, GSM արտաքին ալեհավաք միացած Contact ID միջոցով, GSM GPRS Օնլայն +, Contact ID °GSM GPRS Օֆլայն + -ի միջոցով, Contact ID GSM CSD + -ի միջոցով, Contact ID °GSM SMS պապանման պուլտի միջոցով, GSM SMS հողորդագրություն տա տարածքի պատասխանատուին Ademco ContactID պրոտոկոլներով տեղեկատվության փոխանցում:

. Մարտկոց 384 հատ - Գնահատված լարում 12 Վ, Ծառայության ժամկետը 3-5 տարի, Անվանական հզորություն 7 Ա/ժ, Ներքին դիմադրություն լիարժեք լիցքավորված մարտկոց (25 0 C) 30 մՕմ,

. Մալուխ հրակայուն 200000 մ - Հրակայուն պղնձյա մալուխ 1x2x0.35 քառ. մմ միակողմանի հաղորդիչներով, սիլիկոնային ռետինե խցիկով եւ ՊՎՔ պլաստիկ շերտով, նվազեցված գազի և ծխի արտանետումների եւ այրման արտադրանքի ցածր թունավորությամբ: Օգտագործվում են հրդեհային և կողոպուտային ահազանգման համակարգերում, նախազգուշական համակարգերում և տարհանման հսկողության և տվյալների փոխանցում:

Բոլոր սարքերը պետք է միմյանց միացված լինեն վերոգրյալ հրակայուն մալուխով և ծածկված լինեն 16x16 կրկնակի փականով սպիտակ մալուխատարով:

Տեղադրման և մոնտաժման աշխատանքները պետք է իրականացնեն սարքավորումները արտադրողի կողմից վերապատրաստված բարձրորակ մասնագետները: Ծառայությունները պետք է մատուցել մանկապարտեզում, ոչ աշխատանքային ժամերի:

Գինը ներառում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման ծախսերը:

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիան. Ըստ «Քաղաքաշինության բնակավառում շինարարության իրականացում» հետևյալ ոլորտների՝

Հ/Հ	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	– ԿԱՊԻ

Տեխնիկական առաջադրանք

1. Իրականացնել աշխատանքներն ըստ շինարարական նորմերի և կանոնների:
2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:
3. Սահմանված կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

2. Բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա. Սաֆարյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Բաց մրցույթի հրավերի փոփոխված տեքստը հաստատելու մասին.
3. Բաց մրցույթի հայտարարության փոփոխված տեքստը հաստատելու մասին.
4. Բաց մրցույթի հայտարարության և հրավերի ռուսերեն լեզվով տեքստը հաստատելու մասին.
5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Բաց մրցույթի փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Սաֆարյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

4. Բաց մրցույթի փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Սաֆարյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Սաֆարյան)

Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը:

Գնման ընթացակարգի հայտերը կբացվեն էլեկտրոնային եղանակով www.armeps.am կայքի միջոցով՝ 2019 թվականի օգոստոսի 12-ին, ժամը՝ 10:00-ին, քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի.

Նախագահ՝ Ա. Սաֆարյան

Անդամներ՝ Վ. Գուլգուլյան

Լ. Գևորգյան

Ե. Մատասյան

Ս. Գևորգյան

Քարտուղար՝ Գ. Հուրյան